



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ

0010, ՀՀ, ք. Երևան, Զաքիյան 7-2 | (+374 10) 600 701, 600 704 | (+374 10) 600 703 | info@advocates.am | www.advocates.am

01 փետրվարի 2019թ.
N° 01/01/147-19

Հայաստանի Հանրապետության
վարչապետ՝ պարոն Նիկոլ Փաշինյանին

Կրկնօրինակները՝
Հայաստանի Հանրապետության
ֆինանսների նախարար՝
պարոն Ատոմ Զանջուղազյանին

Հայաստանի Հանրապետության
արդարադատության նախարար՝
պարոն Արտակ Զեյնալյանին

*Հարգելի պարոն վարչապետ,
Հարգելի նախարարներ,*

Իրավական ակտերի նախագծերի հրապարակման e-draft.am միասնական կայքում 23.01.2019թ. հրապարակվել է «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը (**այսուհետ՝ Նախագիծ**), որի 33-րդ հոդվածով առաջարկվել է ՀՀ հարկային օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետում «*շահումով խաղերի*» բառերից հետո լրացնել «, *տոտալիզատորի և ինտերնետ տոտալիզատորի*» բառերը, իսկ «*աուդիտորական կազմակերպությունները*» բառերից հետո լրացնել «, **հաշվապահական, խորհրդարկական, հրավաքանական ծառայություններ մատուցողները**» բառերը (**այսուհետ՝ Վիճելի դրույթներ**):

Հիշեցնենք, որ ՀՀ հարկային օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասը թվարկում է այն գործունեության տեսակներ իրականացնողներին, որոնք շրջանառության հարկ վճարողներ չեն կարող համարվել:

Նախագծի ընդունման դեպքում, փաստաբանական ծառայություններ մատուցող անձինք այլևս չեն կարող համարվել շրջանառության հարկ վճարողներ և պետք է շրջանառության 5 տոկոս հարկի փոխարեն վճարեն 20 տոկոս ավելացված արժեքի հարկ և 18 տոկոս շահութահարկ¹:

¹ Նախագծով շահութահարկի 20 տոկոս դրույքաչափն առաջարկվում է փոխարինել 18 տոկոսով

Նույն վերաբերմունքը դրսևորվել է նաև Նախագծի 36-րդ հոդվածով առաջարկված ՀՀ հարկային օրենսգրքի նոր խմբագրությամբ 56-րդ գլխի 267-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետում սահմանելով, որ խորհրդատվական, իրավաբանական, հաշվապահական ծառայություններ մատուցողները միկրոձեռնարկատիրության սուբյեկտներ չեն կարող համարվել:

Գտնում ենք, որ Նախագծի 33-րդ և 36-րդ հոդվածներում «հաշվապահական, խորհրդատվական, իրավաբանական ծառայություններ մատուցողները» բառերի ներառումը չունի որևէ հիմնավորում և արդարացում, հետևյալ պատճառաբանությամբ.

1. Նախագծի վիճելի դրույթների մասով բացակայում է հիմնավորումը

Օրենսդրության կարևորագույն խնդիրը հասարակության բոլոր անդամների համար արդարությունն ապահովելն է:

Ավելին, իրավաստեղծ գործընթացին հասարակության մասնակցության, ինչպես նաև գործընթացի թափանցիկության և հաշվետվողականության ապահովման նպատակով օրենսդիրը նախատեսել է հանրային քննարկման ինստիտուտը, որը ենթադրում է նորմատիվ իրավական ակտի նախագծի հետ միասին նաև դրա **ընդունման հիմնավորումը** հրապարակելը:

Մասնավորապես «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 2018 թվականի հոկտեմբերի 10-ի N 1146-Ն որոշմամբ հաստատված «Հանրային քննարկումների կազմակերպման և անցկացման կարգ»-ի 12-րդ կետի պահանջներից հետևում է, որ հանրային քննարկումներ իրականացնելու նպատակով հանրային քննարկում իրականացնող մարմինն իր պաշտոնական ինտերնետային կայքում և միասնական կայքում հրապարակում է նորմատիվ իրավական ակտի նախագիծը, իրավական ակտի ընդունման հիմնավորումը:

Մինչդեռ, քննարկվող Նախագիծը չի պարունակում իրավաբանական, խորհրդատվական կամ հաշվապահական ծառայությունների մատուցմամբ զբաղվող անձանց շրջանառության հարկի իրավական ռեժիմից հանելու անհրաժեշտության հիմնավորումը: Ավելին՝ սույն հարցը Նախագծի պաշտոնական հիմնավորման մեջ ընդհանրապես չի արձարծվել:

2. Նախագիծը՝ վիճելի դրույթներով, չի անցել պարզաճ հանրային քննարկում

Նախագիծը, ելնելով իր կարգավորման առարկայի կարևորությունից և առաջարկվող փոփոխությունների էական բնույթից, պետք է անցներ համալիր հանրային-փորձագիտական քննարկում, որը պետք է կազմակերպվեր Նախագիծը մշակող մարմնի կողմից, ինչը լիարժեքորեն չի արվել:

Մասնավորապես, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *հանրային քննարկումներն անցկացվում*

են սույն հոդվածով սահմանված մարմնի կողմից նորմատիվ իրավական ակտի նախագիծը և դրա ընդունման հիմնավորումը շահագրգիռ մարմիններ ներկայացնելու հետ միաժամանակ հրապարակելու միջոցով:

Նույն հոդվածի 4-րդ մասին համապատասխան՝ *հանրային քննարկումների անցկացման արդյունքները և դրանց հիման վրա լրամշակված նորմատիվ իրավական ակտի նախագիծը նույնպես հրապարակվում են:*

Ըստ նույն հոդվածի 5-րդ մասի՝ *հանրային քննարկման ենթակա՝ հանրային քննարկում չանցած Կառավարություն ներկայացված նախագիծը Կառավարությունը կարող է վերադարձնել այն ներկայացնող մարմին:*

Միաժամանակ նշված հոդվածի 6-րդ մասն օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հանրային քննարկման կարգի մանրամասն կարգավորումը վերապահում է ՀՀ կառավարության համապատասխան որոշմանը:

Ըստ այդմ, ՀՀ կառավարության 2018 թվականի հոկտեմբերի 10-ի N 1146-Ն որոշմամբ հաստատված «Հանրային քննարկումների կազմակերպման և անցկացման կարգ»-ի (**այսուհետ՝ Կարգ**) 5-րդ կետի համաձայն՝ *հանրային քննարկումներն իրականացվում են հրապարակայնության, մատչելիության, թափանցիկության և հանրային հաշվետվողականության սկզբունքների հիման վրա:*

Ըստ Կարգի 11-րդ կետի՝ *սույն կարգին համապատասխան հանրային քննարկումներ իրականացվում են նաև հանրային լսումների կամ հանրային հարցումների ձևով, իսկ 23-րդ կետի համաձայն՝ հանրային քննարկում իրականացնող մարմնի նախաձեռնությամբ հանրային լսումներն իրականացվում են տվյալ ոլորտում մասնագիտացված կամ շահագրգիռ անձանց հետ հանդիպումների, ինչպես նաև հեռահաղորդակցության հնարավոր միջոցներով քննարկումների ձևով:*

ՀՀ հարկային օրենսգրքի 3-րդ հոդվածի 11-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում գործում է միասնական հարկային համակարգ՝ հիմնված հետևյալ սկզբունքների վրա՝ **բազմակարծություն և հրապարակայնություն**՝ Օրենսգրքում և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներում փոփոխությունները և (կամ) լրացումները կատարվում են նախապես դրանք քննարկելով ոլորտի մասնագիտական-հասարակական կազմակերպությունների, գործարար միջավայրի ներկայացուցիչների և այլ շահագրգիռ պետական կառավարման մարմինների հետ:

Չնայած վերոհիշյալ իրավակարգավորումներին՝ լիազոր մարմինը չի իրականացրել դրանց մեծ մասը: Մասնավորապես, Նախագիծը՝ ներառյալ իրավաբանական ծառայություններին վերաբերող խնդրահարույց փոփոխությունը, հրապարակվել է www.e-draft.am կայքում, սակայն չի իրականացվել Նախագծի քննարկում շահագրգիռ խմբերի հետ՝ համապատասխան ընթացակարգով: Նման պայմաններում, ինչպես ուղղակիորեն նշված է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 4-րդ հոդվածի 5-րդ մասում, Կառավարությունը կարող է նախագիծը վերադարձնել

այն ներկայացրած մարմինն՝ նախագծի մասին որոշման ընդունումը հետաձգելով մինչև նախագծի հանրային քննարկման ընթացակարգերի պատշաճ պահպանմամբ այն կրկին գործադիր իշխանության բարձրագույն մարմնի քննարկմանը ներկայացնելը:

Տվյալ պարագայում, գտնում ենք, որ առկա են բոլոր հիմքերը քննարկվող Նախագծի հետագա օրենսդրական գործընթացը կասեցնելու համար, քանի որ տվյալ Նախագիծը չի անցել ո՛չ լայն հասարակայնության և ոչ էլ առնվազն փորձագիտական հանրույթի քննարկումների պրիզմայով, չի իրականացվել դրա անկախ և անաչառ հանրային փորձաքննություն, որպիսի պայմաններում Նախագծի ներկայացումը Կառավարությանը և, առավել ևս, Ազգային ժողովին, խնդրահարույց է: Մասնավորապես, այսօր չեն ապահովվում Նախագծի շահառուների՝ տվյալ պարագայում փաստաբանական համայնքի և վերջինիս ինքնակառավարման մարմնի՝ ՀՀ փաստաբանների պալատի և լիազոր մարմնի միջև հետադարձ կապի կառուցակարգերն ու երաշխիքները, որոնք, ինչպես վերը հիմնավորվեց, նախատեսված են ՀՀ օրենսդրությամբ: Ուստի՝ նման ճանապարհով մշակված և իրավաստեղծ պատկան մարմիններին ներկայացվող օրենսդրական նախագիծը կարող է ունենալ հանրային լեգիտիմության լուրջ խնդիր, քանի որ հաշվի չեն առնված առաջարկվող փոփոխությունների հասցեատերերի՝ տվյալ դեպքում իրավաբանների և փաստաբանների կարծիքն ու մոտեցումները՝ ի հակառակ գործող օրենսդրության պահանջների:

Նախագիծը նախապես քննարկման համար չի ներկայացվել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին:

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *պաշտպանն իրավասու է մինչև մարդու իրավունքներին և ազատություններին վերաբերող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի ընդունումը դրանց վերաբերյալ իրավասու մարմին ներկայացնելու գրավոր կարծիք: Նախագիծը վիճելի դրույթներով վերաբերում է մարդու իրավունքներին և ազատություններին, հետևաբար Նախագիծ մշակողը պարտավոր էր ապահովել Մարդու իրավունքների պաշտպանի նշված իրավունքի իրականացման հնարավորությունը:*

3. Նախագիծը փաստաբանների նկատմամբ խորական մոտեցման արդյունք է և հաշվի չի առնվել փաստաբանական գործունեության իրավապաշտպան բնույթը

Փաստաբանական գործունեությունը իրավապաշտպան գործունեության տեսակ է: Փաստաբանական գործունեությունը գտնվում է պետության անմիջական հոգաձության ներքո, ինչը պահանջում է հանրային իշխանությունից փաստաբանությանը վերաբերող ցանկացած փոփոխություն, այդ թվում՝ տնտեսական վերափոխում, դիտարկել ոչ միայն բյուջետային և բիզնես պրիզմայի ներքո, այլ ղեկավարվել հանրության և անհատի իրավունքների և ազատությունների պատշաճ պաշտպանվածության ապահովման պետության պոզիտիվ պարտականության տեսանկյունից, քանի որ փաստաբանությունը չի հանդիսանում ձեռնարկատիրության դասական

տեսակ, որի տեսակարար կշիռը և արդյունավետությունը գերազանցապես թողնված է շուկայական կարգավորման կառուցակարգերին: **Փաստաբանությունը մի ոլորտ է, որի շարունակական զարգացումը հանրության և պետության կենսական շահերի տիրույթում է և այդպիսով ենթակա է պետության առանձնահատուկ հոգածության և պաշտպանության արդյունավետ կառուցակարգերի ներգործությանը:**

Ավելին՝ փաստաբանական ծառայությունների ոլորտի հարկային և վարչարարական բեռի անհիմն ծանրացումը պետության կողմից կարելի է դիտարկել որպես հանրային իշխանության կողմից փաստաբանների նկատմամբ խտրական վերաբերմունք՝ ի համեմատ գործունեության այն տեսակների, որոնք հետայսու ևս շարունակելու են հանդիսանալ շրջանառության հարկի իրավական ռեժիմի շահառու:

Ամենևին նպատակ չունենալով նսեմացնել բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների, ներդրումային ընկերությունների, արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցների, գրավատների, խաղատների և շահումով խաղերի կազմակերպման գործունեություն իրականացնողների դերը, միևնույն է պարզ չէ, թե ինչ տրամաբանությամբ է առաջարկվում փաստաբանական գործունեություն իրականացնողներին նույն խմբում դասակարգել:

Այդ խմբում են նաև աուդիտորական ծառայություն իրականացնողները, սակայն այս ծառայությունները նույնպես տարբերվում են: Եթե աուդիտը՝ որպես գործունեության տեսակ, իրականացվում է առևտրային կազմակերպությունների կազմակերպա-իրավական ձևերով, ինչը ենթադրում է ավելի մեծ նյութական և մարդկային ռեսուրսների առկայություն, ինչը նշված տնտեսավարողներին դարձնում են անգամ ոչ բարենպաստ փոփոխությունների հանդեպ առավել դիմադրունակ, ապա փաստաբանների զգալի մասն իր գործունեությունն իրականացնում է անհատ ձեռնարկատիրոջ իրավական ռեժիմում, ինչը ենթադրում է ինչպես ուղղակի գույքային պատասխանատվություն, այնպես էլ սահմանափակ մարդկային ու նյութական ռեսուրսներ, ինչպես նաև համեմատաբար նվազ հարկվող շրջանառություն:

Ավելին, տարբեր է նաև վերոնշյալ սուբյեկտների գործունեության նպատակները և ուշադրության արժանի շահերը: Մասնավորապես, թե աուդիտորական ընկերությունների և թե մյուս վերը թվարկված տնտեսավարող սուբյեկտների գործունեության միակ նպատակը շահույթ ստանալն է, այնինչ **փաստաբանի հիմնական առաքելությունը անձի իրավունքների և ազատությունների պաշտպանությունն է**, իսկ ուշադրության արժանի շահը՝ արդարադատության շահը (իրավաբանական օգնության իրավունքի մատչելիությունը): **Հետևաբար վերոնշյալ տնտեսավարող սուբյեկտների հետ փաստաբանի նույնացումը, այդ թվում հարկային քաղաքականության մշակման և կիրառման տեսանկյունից, անթույլատրելի է:**

Այլ կերպ ասած՝ Նախագծի հեղինակների կողմից խորապես չեն ուսումնասիրվել առաջարկվող փոփոխությունների թիրախային խմբերի նյութական և մարդկային ռեսուրսների ծավալները, գնագոյացման

մեխանիզմները, միջին շրջանառությունը և այլ համազոր առանձնահատկություններ:

4. Նախագծով առաջարկվող փոփոխությունը վնասակար է փաստաբանության ինստիտուտի սահմանադրական հիմքերի համար

Նախագծով առաջարկվող իրավակարգավորումը, որով իրավաբանական ծառայություններ մատուցող անձինք դուրս են մղվում շրջանառության հարկով աշխատելու իրավունք ունեցող սուբյեկտների շարքից, հակասում է փաստաբանության՝ որպես սահմանադրական ինստիտուտի էությանը և հանդիսանում է փաստաբանների արդյունավետ գործառմանը խոչընդոտող հանգամանք:

Ի մասնավորի, ՀՀ Սահմանադրության 64-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ **իրավաբանական օգնություն ապահովելու նպատակով երաշխավորվում է անկախության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության վրա հիմնված փաստաբանության գործունեությունը**: (...):

ՀՀ Սահմանադրությամբ հստակորեն ընդգծվում է փաստաբանների իրավապաշտպան գործառույթը, ինչը և հիմք է հանդիսացել փաստաբանությանը սահմանադրական ինստիտուտի կարգավիճակ տալու համար, քանի որ պետությունը, ըստ նույն հոդվածի 1-ին մասի և 61-րդ հոդվածի, **ունի պոզիտիվ պարտականություն ապահովել յուրաքանչյուր անձի իրավաբանական օգնություն ստանալու և իր իրավունքների ներպետական և միջազգային դատական պաշտպանություն ստանալու սահմանադրական իրավունքների իրացման պարզաճ սոցիալ-իրավական պայմաններ**:

ՀՀ Սահմանադրության սույն տրամաբանությանն է հետևել նաև ՀՀ սահմանադրական դատարանը, որը 05.04.2016թ. ՍԴՈ 1263 որոշման մեջ հստակորեն արձանագրել է, որ. «... փաստաբանի միջոցով օրենսդիրը ոչ միայն ապահովում է Սահմանադրության 64-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի երաշխավորման իր պոզիտիվ պարտականությունը, այլև երաշխավորում է որակյալ իրավաբանական օգնություն՝ դրանով իսկ երաշխավորելով իրավական պետությանը հարիր արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը՝ ամրագրված Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասում:»:

Փաստորեն, Սահմանադրական դատարանը Սահմանադրության վերոնշյալ հոդվածները մեկնաբանել է այնպիսի լույսի ներքո, որն էապես ընդլայնել է պետության պոզիտիվ պարտականության շրջանակներն անձի իրավաբանական օգնություն և դատական պաշտպանություն ստանալու սահմանադրական իրավունքների ապահովման ոլորտում, ինչպես նաև փաստաբանության ինստիտուտին ըստ էության վերապահել է սահմանադրաիրավական կարգավիճակ, որպես պետության նշյալ պոզիտիվ պարտականության իրացման հիմնական կառուցակարգերից մեկի:

Ըստ այդմ, փաստաբանության՝ որպես մասնագիտական և իրավապաշտպան սահմանադրական ինստիտուտի բնականոն գործառման ապահովումը հանդիսանում է իրավունքը խախտված անձին որակյալ և համակողմանի իրավաբանական օգնությամբ ապահովելու պետության պոզիտիվ պարտականության իրացման հիմնական ուղղություններից մեկը: Ակնհայտ է, որ պետությունը հասարակության և յուրաքանչյուր անհատի հանդեպ իր նշված հիմնարար պարտականության պատշաճ իրացնելու համատեքստում կոնկրետ պարտականություններ ունի փաստաբանության ինստիտուտի նկատմամբ, և **այդ պարտականությունն ամենևին չի սահմանափակվում միայն ձևական պետա-իրավական երաշխիքներով՝** փաստաբանությանը նվիրված օրենքի ընդունմամբ, հանրային պաշտպանի գրասենյակին պետական բյուջեից միջոցների հատկացմամբ, փաստաբանության ինքնակառավարման երաշխիքների ընձեռմամբ: Խոսքը վերաբերում է ավելի լայն համատեքստում փաստաբանության համար արդյունավետ գործելու պայմաններ ստեղծելու պետության պարտականությանը: Վերջինս, նախևառաջ, հանգում է տնտեսական երաշխիքներին, որոնք ուղղակիորեն շաղկապված են փաստաբանների կողմից մատուցվող ծառայությունների մասնագիտական որակի և փաստաբանության շարունակական զարգացման վրա ազդող այդ մասնագիտական համայնքի յուրաքանչյուր անդամի ինքնակատարելագործման բնական մոտիվացիայի վրա:

Այլ կերպ ասած՝ փաստաբանն իր մեջ ամփոփում է երկու բնորոշ կողմեր՝ իրավապաշտպան գործառույթի իրականացում և իր մասնագիտական ծառայություններով սեփական սոցիալ-տնտեսական կարիքների բավարարում: Ընդ որում, փաստաբանի որակյալ ծառայությունների մատուցումը պայմանավորված է այս երկու կողմերի ներդաշնակ միասնությամբ. փաստաբանը պետք է ունենա անձնական մոտիվացիա պատշաճորեն կատարելու իր մասնագիտական պարտականություններն իր վստահորդների և լայն իմաստով հասարակության նկատմամբ և, ընդհանրապես, զբաղվելու փաստաբանությամբ՝ որպես մասնագիտական գործունեության տարատեսակով, որպիսի հանգամանքը մեծապես կապված է սեփական աշխատանքով բավարար նյութական միջոցներ վաստակելու և պետության կողմից հարուցվող բյուրոկրատական խոչընդոտներից զերծ մնալու հրամայականի հետ:

Նախագծի ընդունման հետևանքը լինելու է նաև փաստաբանական ծառայությունների գների թանկացումը քաղաքացիների համար, քանի որ փաստաբանական գրասենյակն իր կողմից գնահատված ծառայության գումարին ստիպված ավելացնելու է առնվազն 20 տոկոս ավելացված արժեքի հարկը, որը փոխանցելու է պետությանը: Փաստաբանական գրասենյակը, ելնելով իր ծառայության բնույթի առանձնահատկությունից, ԱԱՀ ներառող

ծախսեր² կատարելու լայն հնարավորություն չունի, որպեսզի հաշվանց կատարի: Հետևաբար ԱԱՀ-ի գումարը պետք է փոխանցի պետական բյուջե:

Հատկանշական է նաև այն հանգամանքը, որ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող փաստաբանական գրասենյակները այս պահին գործող օրենսդրությամբ հետևյալ հարկային վճարումներն են կատարում՝

- 5 տոկոս շրջանառության հարկ.
- 25 տոկոս³ եկամտային հարկ, որպես աշխատակիցների հարկային գործակալ⁴.
- 5 տոկոս շահաբաժնի հարկ:

Նախագծի ընդունման դեպքում իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող փաստաբանական գրասենյակները հետևյալ հարկային վճարումներն են կատարելու՝

- **20 տոկոս** ավելացված արժեքի հարկ՝ շրջանառությունից.
- **18 տոկոս** շահութահարկ՝ համախառն եկամտի և նվազեցումների դրական տարբերությունից.
- 23 տոկոս⁵ եկամտային հարկ, որպես աշխատակիցների հարկային գործակալ.
- 5 տոկոս շահաբաժնի հարկ:

Տվյալ դեպքում Նախագծով պետությունը փաստորեն զրկում է փաստաբաններին հարկային հարաբերականորեն պարզեցված ռեժիմից և ծանրացնում է փաստաբանների հարկային բեռը, ինչպես նաև դրանով պայմանավորված՝ փաստաբաններին ներքաշում է լրացուցիչ փաստաթղթաշրջանառությամբ պայմանավորված բյուրոկրատական խրթին ընթացակարգերի մեջ: Պետության նման քաղաքականությունը, հակասելով սահմանադրական կարգավիճակ ունեցող փաստաբանության ինստիտուտի հանդեպ Հայաստանի Հանրապետության ունեցած սահմանադրական պոզիտիվ պարտականություններին, փաստորեն ունենալու է բացասական ազդեցություն փաստաբանների կենսաապահովման մակարդակի, գործունեության մոբիլության և անկաշկանդության վրա՝ այդպիսով ազդելով որակյալ իրավաբանական օգնություն տրամադրելու փաստաբանների շարունակական մոտիվացիայի վրա: Իսկ հասարակության համար նման իրավիճակն ունենալու է հետևյալ ակնհայտ հետևանքները՝ փաստաբանությամբ զբաղվողների թվաքանակի կրճատում, մատուցվող ծառայությունների գների բարձրացում և (կամ) ծառայությունների որակի վատթարացում:

² ԱԱՀ ներառող ծախսեր կարող են լինել էլեկտրոնների գիտության, գազամատակարարման, հեռախոսային ծառայությունների ծախսերը, որոնց գումարների 16,67 տոկոսը կարող է հաշվանցվել: Այս ծառայությունների գծով հաշվանցվող ԱԱՀ գումարը փաստաբանի շրջանառության մեջ փոքր տոկոս է կազմում

³ վերցված է միջինը

⁴ չի ներառվել դրոշմանիշների և պարտադիր կուտակային վճարները

⁵ վերցված է միջինը

Այժմ փաստաբանական դպրոցում սովորում են տասնյակ մեր ապագա գործընկերները, որոնք ակնկալում են մտնել փաստաբանական համայնք իրենց աշխատասիրությամբ, հմտություններով: Քիչ չեն նաև այն մարդիկ, որոնք սովորում են կրթական տարբեր բուհերում և արդեն իսկ ծրագրել են դառնալ փաստաբան:

Առաջարկվող նախագիծը ընդունվելու դեպքում փաստաբան դառնալու ցանկություն ունեցող անձանց թիվը միանշանակ կկրճատվի, իսկ այժմ փաստաբանական դպրոցում սովորող անձինք փաստաբանական համայնքում որպես անհատ փաստաբան կայանալու նպատակը շատերի համար չի իրականանա: Փաստաբանական համայնք կարող են մտնել արդեն իսկ կայացած անձինք կամ այն անձինք, որոնք ունեն կողմնակի եկամուտ: Այս պայմաններում սույն մասնագիտության մեջ մտավոր կարողությունները և աշխատասիրությունը մրցակցության բաղադրիչ չեն հանդիսանա:

Այդպիսով կխաթարվի փաստաբանական համայնքում մրցակցային, որակյալ կարգերով ապահովելը՝ արդյունքում այն կարող է հետագայում լուրջ ազդեցություն թողնել փաստաբանական համայնքի համար, մասնավորապես՝ փաստաբանական սերնդափոխության համար:

Միաժամանակ, առաջարկվող փոփոխությունը հանգեցնելու է հասարակության և անհատի իրավական պաշտպանության առումով պետության կողմից իր պոզիտիվ սահմանադրական պարտականությունների ոչ պատշաճ կատարմանը, ինչպես նաև իրավական պետություն հանդիսացող ՀՀ-ում փաստաբանության աճող դերի և նշանակության խոչընդոտմանը:

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրով, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրով և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին եվրոպական կոնվենցիայով սահմանված են անձանց իրավական պաշտպանության և իրենց նախընտրած պաշտպանի կամ ներկայացուցչի կողմից պաշտպանության իրավունքը: Այս իրավունքն ակնառու է և արտացոլված է ԵԱՀԿ մասնակից պետությունների ստանձնած պարտավորությունների մեջ:

«Փաստաբանների դերի մասին»⁶ (ընդունված 1990թ.) ՄԱԿ-ի հիմնարար սկզբունքները հաստատում են բոլորի իրավական օգնության իրավունքը և կոչ են անում պետություններին ստեղծել արդյունավետ և ոչ խտրական ընթացակարգեր «փաստաբանների արդյունավետ և հավասար մատչելիության» մեխանիզմները, ինչպես նաև ապահովել այդ մեխանիզմը բավարար ֆինանսավորմամբ և տրամադրել ռեսուրսներ՝ անվճարունակ անձանց համար իրավաբանական ծառայությունների համար» (հիմնարար սկզբունք 1-4):

Ամբաստանյալն իրավունք ունի պաշտպանվել իր սեփական ընտրած խորհրդատուի կողմից (ICCPR, Article 14(3)(b); ECHR, Article 6(3)(c).): Պաշտպանվելու իրավունքը խախտվում է, եթե կալանավորին թույլ չեն տալիս օգտվել իր ցանկությամբ ընտրված փաստաբանի ծառայությունից:

⁶ ՀՀ իրավական ակտերի համակարգում ներառված է «Իրավաբանների դերի մասին» վերնագրով

Եվրոպական դատարանն ուշադրություն է դարձրել փաստաբանի մատչելիության հարցին «Գոլդերի» եզրակացությունում, *«[h] եթե իջնում է արդյունավետ իրավունքի իրականացումը, կարող է նշանակել այդ իրավունքի խախտում, նույնիսկ եթե խոչընդոտը հանդիսանում է ժամանակավոր բնույթ»*: (Golder v. UK, ECtHR Judgment, 21 February 1975, §26.292):

Միջազգային ստանդարտները պահանջում են, որ անվճարունակ ամբաստանյալներին տրամադրվեն անվճար կամ պետականորեն երաշխավորված իրավական օգնություն, երբ դա է պահանջում է արդարության շահերը: Որտեղ իրավունքները սահմանափակելիս անձի ազատությունը և արդարության շահերը վտանգված է, սկզբունքորեն կոչ են անում երաշխավորել իրավաբանական ներկայացուցչությունը (Benham v. United Kingdom, ECtHR Judgment, 10 June 1996, §61; see also Quaranta v. Switzerland, ECtHR judgment of 24 May 1991):

«Փաստաբանների դերի մասին» ՄԱԿ-ի հիմնարար սկզբունքները ենթադրում են, որ «[ա] նման անձինք, ովքեր չունեն փաստաբան, իրավաբանական օգնության իրավունք ունի բոլոր այն դեպքերում, երբ դա պահանջում է արդարության շահերը, իրավունք ունեն ունանալու փորձառու և իրավասություն իրավաբան, որը համապատասխանում է նրան վերագրվող հանցագործության բնույթին, որպեսզի նրանք արդյունավետ իրավական օգնություն ցույց տան, առանց դրանց համար լրիվ կամ մասնակի վճարման, եթե նրանք բավարար միջոցներ չունեն նման ծառայությունների համար վճարելու համար »:

Պետությունը պարտավոր է երաշխավորել ձեռնահաս և արդյունավետ ներկայացուցչության տրամադրումը:

«Փաստաբանների դերի մասին» ՄԱԿ-ի հիմնարար սկզբունքները պահանջում են, որ պետությունները «ապահովեն, որ փաստաբանները կարողանան կատարել իրենց բոլոր մասնագիտական գործառույթները՝ առանց վախենալու, խոչընդոտների, ոտնձգություն կամ ոչ պատշաճ միջամտություն. ի թիվս այլոց, և նրանք (փաստաբանները) չպետք է տուժեն կամ նրանց սպառնան, ինչպես նաև դատական կամ վարչական, տնտեսական կամ այլ պատժամիջոցներով՝ ընդունված մասնագիտական պարտականություններին, չափանիշներին և էթիկայի սկզբունքներին համապատասխան կատարված գործողությունների համար» (հիմնարար սկզբունքների 16 կետ):

Սկզբունքները նաև պահանջում են, որ փաստաբանները «օգտվեն քաղաքացիական և քրեական անձեռնմխելիությունից՝ կատարված համապատասխան հայտարարությունների համար» (հիմնարար սկզբունքների 20 կետ):

5. Վիճելի դրույթներով Նախագիծը վնասելու է իրավաբանական օգնություն ստանալու իրավունքին

Սույն գրության 4-րդ կետում բերված փաստարկներից հետևում է, որ փաստաբանական ծառայությունների գները թանկանալու են քաղաքացիների համար: Պակաս կարևոր չէ նաև ազգաբնակչության ոչ բավարար

գնողունակությունը, որպիսի պայմաններում առաջարկող փոփոխություններով փաստաբանական ծառայությունների գների անխուսափելի բարձրացումը, վերջին հաշվով, հարվածելու է նախ և առաջ միջին վիճակագրական քաղաքացիների շահերին, ովքեր կգրկվեն որակյալ իրավաբանական ծառայություններ ստանալու հնարավորությունից:

Նախագիծ մշակողը այս ոլորտում պատշաճ ուսումնասիրություն չի կատարել⁷:

«Սահմանադրության 63-րդ և 64-րդ հոդվածների լույսի ներքո, Նախագիծը մշակող մարմինը պետք է տեղեկություններ հավաքեր հետևյալ հարցերի պատասխանները ստանալու համար՝

1. Հայաստանի Հանրապետությունում որքա՞ն փաստաբան է գործում.
2. Փաստաբանական գործունեություն իրականացնող քանի՞ տնտեսվարող սուբյեկտ է գործում.
3. Փաստաբանական գործունեություն իրականացնողներից քանիսի շրջանառությունն է տարեկան գերազանցում 1 մլն. ՀՀ դրամը, 5 մլն. ՀՀ դրամը, 10 մլն. ՀՀ դրամը, 20 մլն. ՀՀ դրամը, 30 մլն. ՀՀ դրամը, 50 մլն. ՀՀ դրամը և 100 մլն. ՀՀ դրամը.
4. Տարեկան քանի քրեական գործ է քննում պետական եկամուտների կոմիտեի նախաքննության մարմինը.
5. Տարեկան քանի՞ քրեական գործ է քննում ՀՀ քննչական կոմիտեն.
6. Տարեկան քանի՞ քրեական գործ է քննում ՀՀ հատուկ քննչական ծառայությունը.
7. Տարեկան քանի՞ քրեական գործ է քննում Ազգային անվտանգության ծառայության նախաքննության մարմինը.
8. Տարեկան քանի՞ նյութ է նախապատրաստվում ՀՀ ոստիկանության մարմնում և մյուս հետաքննության մարմիններում.
9. Տարեկան քանի՞ գործ է քննում առաջին ատյանի դատարանը՝ քաղաքացիական գործերով.
10. Տարեկան քանի՞ գործ է քննում առաջին ատյանի դատարանը՝ քրեական գործերով.
11. Տարեկան քանի՞ գործ է քննում վարչական դատարանը՝ վարչական գործերով.
12. Տարեկան քանի՞ գործ է քննում վերաքննիչ քաղաքացիական դատարանը.
13. Տարեկան քանի՞ գործ է քննում վերաքննիչ քրեական դատարանը.

⁷ այս փաստը հիմնավորվում է նաև այն հանգամանքով, որ Նախագիծն առանց վիճելի և մի շարք այլ դրույթների նախկինում՝ 2018թ. աշնանը ներկայացված է եղել շահագրգիռ պետական մարմիններին (այդ թվում՝ e-draft.am-ում), իսկ այս փոփոխություններով Նախագիծը հայտնվել է 2019թ. հունվարին: Հետևաբար, մշակող մարմինը ֆիզիկապես չէր կարող ուսումնասիրել մի ոլորտ, որն ի սկզբանե իրենց քաղաքականության հետաքրքրությունների մեջ չի գտնվել:

14. Տարեկան քանի՞ գործ է քննում վերաքննիչ վարչական դատարանը.
15. Տարեկան քանի՞ գործ է քննում Վճռաբեկ դատարանը.
16. Հայաստանի Հանրապետությունում որքա՞ն հանրային պաշտպանի հաստիք է սահմանված.
17. Տարեկան քանի՞ գործով (քրեական, քաղաքացիական, վարչական, սահմանադրական) է հանրային պաշտպանի գրասենյակը անվճար իրավաբանական օգնություն տրամադրում:

Որոշ տվյալներ սույն գրությամբ կարող ենք ներկայացնել՝

I. 2019թ. հունվարի 24-ի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում գործում են **1992 փաստաբան**, որոնց մեծ մասը աշխատանքային պայմանագրերի հիման վրա աշխատում է փաստաբանական գրասենյակներում՝ իր եկամուտների ավելի քան 25 տոկոսի չափով եկամտային հարկի և մյուս այլ պարտադիր վճարների միջոցով մասնակցելով պետական բյուջեի համալրմանը:

II. 2018 թվականի ընթացքում Հանրային պաշտպանի գրասենյակը իրավաբանական օգնություն է տրամադրել ընդհանուր **13.709 գործով**, որից **6688** քրեական գործերով, իսկ **7021** քաղաքացիական (վարչական) գործով (ներառյալ խորհրդատվությունը):

III. Միայն առաջին ատյանի դատարանում (ներկայացված չէ վերաքննիչ և վճռաբեկ ատյանների տվյալները) 2017 թվականի ընթացքում (2018թ. տվյալներն անհամեմատ աճելու են) քննվել (ստացվել) են հետևյալ քանակի գործեր՝

- 1) 2017թ. վարչական դատարանում՝ **23.095** վարչական գործ.
- 2) 2017թ. առաջին ատյանի դատարաններում՝ **137.003** քաղաքացիական գործ.
- 3) 2017թ. առաջին ատյանի դատարաններում՝ **96.245** վճարման կարգադրություն.
- 4) 2017թ. առաջին ատյանի դատարաններում՝ **9.218** սնանկության գործ.
- 5) 2017թ. առաջին ատյանի դատարաններում՝ **5027** քրեական գործ.
- 6) 2017թ. մինչդատարանական վերահսկողության կարգով առաջին ատյանի դատարաններում՝ **23.382** միջնորդություն:

Վիճակագրական այս տվյալները, ինչպես նաև վերոհիշյալ մարմիններից ստացվող տվյալները, ապացուցելու են այն պնդումը, որ Նախագիծն ընդունվելու դեպքում, բացասաբար է ազդելու իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի (դատարանի մատչելիության իրավունքի) վրա:

Հայաստանի Հանրապետությունը չի կարողանալու ապահովել քաղաքացիների անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի իրականացումը, քանի որ 2013 թվականից առ այսօր միայն 5 հաստիքով է

ավելացրել⁸ հանրային պաշտպանների թվաքանակը, յուրաքանչյուր տարի մերժելով⁹ Փաստաբանների պալատի՝ հաստիքներ ավելացնելու խնդրանքը: Այսօր Հայաստանում գործում է ՀՊԳ ղեկավարի 1 հաստիք, ՀՊԳ ղեկավարի տեղակալի 1 հաստիք¹⁰ և 54 հանրային պաշտպանի հաստիք:

6. Նախագծով առաջարկվող փոփոխությունը բացասական ազդեցություն կունենա փաստաբանության ինստիտուտի անկախության վրա

Գործող հարկային օրենսգրքի իրավակարգավորումների պայմաններում փաստաբանները, հնարավորություն ունենալով գործել շրջանառության հարկի իրավական ռեժիմում, մեծապես ազատված են եղել հարկային-իրավական փաստաթղթաշրջանառությունից, ինչը բնորոշ է շահութահարկի և ավելացված արժեքի հարկի իրավական ռեժիմում աշխատող տնտեսվարողներին: Շրջանառության հարկի իրավական ռեժիմը ենթադրում է նաև պետության ավելի նվազ վերահսկողություն, ինչը թույլ է տալիս փաստաբաններին կրճատել հարկային մարմնի հետ հարաբերությունների վրա ծախսվող ժամանակն ու միջոցները և ամբողջովին կենտրոնանալ իրենց մասնագիտական գործառույթների բարեխիղճ և որակյալ կատարման վրա: Նման իրավիճակը բարենպաստ պայմաններ էր ստեղծում պետությունից փաստաբանների անկախության ապահովման համար, ինչը նաև սահմանադրական պահանջ է՝ ի դեմս ՀՀ Սահմանադրության 64-րդ հոդվածի 2-րդ մասի:

Փաստաբանի անկախությունը պետությունից խիստ կարևոր է փաստաբանական գործառույթների պատշաճ կատարման համար, քանի որ փաստաբանը բնականորեն հանդիսանում է կապող օղակ հանրության և պետության միջև՝ ի դեմս դատարանների և վարչական մարմինների, նպաստում է արդարադատության պատշաճ իրականացմանը:

Փաստաբանի սահմանադրական սույն կարգավիճակն իր զարգացումն է ստացել նաև օրենսդրական մակարդակում: Մասնավորապես, «Փաստաբանության մասին» օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ փաստաբանությունը փաստաբանների մասնագիտական միավորում է, որը, հանդիսանալով քաղաքացիական հասարակության ինստիտուտ, չի մտնում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների համակարգի մեջ:

Փաստաբանությունը գործում է անկախության, օրինապահության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության սկզբունքների հիման վրա:

Նույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին ապի համաձայն՝ փաստաբանական գործունեությունն իրավապաշտպան գործունեության տեսակ է, որն իրականացնում է փաստաբանը և ուղղված է իրավաբանական օգնություն ստացող անձի իրավունքների, ազատությունների և շահերի իրականացմանն

⁸ 2016 թվականին

⁹ Այդ թվում՝ 2019 թվականի համար է մերժել

¹⁰ Օրենքով պետք է առնվազն 2 տեղակալի հաստիք սահմանվեր

ու պաշտպանությանը՝ օրենքով չարգելված բոլոր միջոցներով և եղանակներով:

Փաստաբանի անկախությունը, նախևառաջ, հանգում է պետական համակարգում ընդգրկված չլինելուն և պետությունից վարչական և ֆինանսական կախվածություն չունենալուն, ինչպես նաև փաստաբանների նկատմամբ պետության վարչաիրավական ազդեցության լծակների հնարավորինս սակավությանը: Բնական է, որ հարկային պարտավորությունների հետ կապված վարչաֆինանսական հարաբերությունները հանդիսանում են պետության իրավական և քաղաքական առաջնային լծակներից, որոնց գործադրման շրջանակների ընդլայնումը փաստաբանների դեպքում սպառնում է փաստաբանների անկախության սահմանափակմանը՝ դառնալով փաստաբանների մասնագիտական գործունեությամբ պայմանավորված՝ պետական ինստիտուտների պաշտոնական և սովերային ազդեցությունների և ճնշումների հնարավոր միջոց:

Նախագծով փաստաբանների հարկային բեռի ավելացումը և նրանց նկատմամբ հարկային վարչարարության խստացումը մեծացնելու է փաստաբանների կախվածությունը պետությունից և չհիմնավորված կերպով բազմապատկելու է փաստաբանների շփումները պետական պաշտոնատար անձանց հետ, ինչը, ելնելով նրանից, որ փաստաբանների վստահորդների շահերը շատ հաճախ առնչվում են հարկային և պետական այլ մարմինների, կարող են ստեղծել փաստաբանների և վստահորդների շահերի միջև հակասություններ՝ հանգեցնելով փաստաբանների ներքին գրաքննության դեպքերի, ինչպես նաև բացասաբար ազդել փաստաբանի մասնագիտական բարեխղճության վրա:

Սույն համատեքստում հարկ է մեջբերել նաև փաստաբանի անկախության վերաբերյալ միջազգային փաստաթղթերի դրույթները, որոնք համահունչ են արտահայտվող մտահոգություններին:

Մասնավորապես, Եվրոպական փաստաբանների վարքագծի կանոնագրի 2.1.1 ենթակետի համաձայն՝ փաստաբանը պետք է բացարձակապես անկախ լինի ցանկացած ազդեցությունից, հատկապես... արտաքին ճնշումից:

Եվրոպական համայնքի փաստաբանական միությունների խորհրդի 1977թ. Պերուջիայի հռչակագրի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ...փաստաբանի անկախությունը .. նույնքան կարևոր է արդարադատության իրականացմանը համար, որքան դատավորի անաչառությունը:

Արդարադատության իրականացման և մարդու իրավունքների պաշտպանության կառուցակարգերի համակարգում փաստաբանների կենտրոնական տեղին անդրադարձել է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը: Tuheiaava v. France գործով 2018թ. օգոստոսի 28-ի իր վճռում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը սահմանել է, որ պետության միջամտությունը փաստաբանի գործունեությանը խախտում է փաստաբանի անկախությունը և մասնագիտական հատուկ կարգավիճակը: Փաստաբաններն ունեն հատուկ հասարակական կարգավիճակ, որը նրանց

տալիս է կենտրոնական տեղ արդարադատության իրականացման գործընթացում՝ որպես միջնորդներ հասարակության և դատարանների միջև: Հետևաբար փաստաբանները պետք է ունենան երաշխիքներ իրենց մասնագիտական պարտականությունները կատարելիս:

Եթե Եվրոպական դատարանի վերոնշյալ դիրքորոշումը համադրենք պետության միջամտության իրավաչափության նույն Դատարանի կողմից մշակված թեստին՝ կապված, մասնավորապես, պետության միջամտության իրավաչափության, հիմնավորվածության և համաչափության հետ, ապա ակնհայտ է դառնում, որ փաստաբանների հարկային բեռի և հարկային-իրավական փաստաթղթաշրջանառության մեծացումը չունի իրավաչափ նպատակ և հիմնավորվածության ու համաչափության անհրաժեշտ մակարդակ, ինչը նաև ամրագրված է ՀՀ Սահմանադրության 78-րդ հոդվածով:

Սույն փոփոխությունն Ազգային ժողովի կողմից ընդունվելու պարագայում էապես կսահմանափակի փաստաբանների անկախությունն ու մասնագիտական անկաշկանդությունը հատկապես պետական մարմինների հետ հարաբերություններում, ինչը բացասաբար կազդի վստահորդների իրավունքների և օրինական շահերի պատշաճ պաշտպանվածության և, ընդհանրապես, ՀՀ-ում մարդու իրավունքների պաշտպանության վիճակի վրա:

Այս մտահոգության համար հիմք է ծառայել նաև վերջին շրջանում հարկային մարմնի կողմից փաստաբանական գործունեություն իրականացնողների նկատմամբ հատուկ հետաքրքրությունը, որը դրսևորվել է նաև փաստաբաններից (այդ թվում՝ քրեական հնչեղ գործում ներգրավված փաստաբանից) բացատրություններ և պարզաբանումներ պահանջելու միջոցով:

7. Նախագիծ մշակող մարմնի ներկայացուցչի դիրքորոշումը մտահոգիչ է

Ֆինանսների նախարարի տեղակալ Արման Պողոսյանը 2019թ. հունվարի 30-ին, Հարկային օրենսգրքի փոփոխություններին նվիրված քննարկման ժամանակ փաստաբանական ծառայությունները ԱԱՀ-ից ազատելու առաջարկին այսպես է արձագանքել՝ **«Այսօր եթե մենք փաստաբանական ծառայություններն ազատենք ավելացված արժեքի հարկից կամ նրանց համար սահմանենք ցածր հարկային բեռ, բոլորն են օգտվելու այդ հարկային բեռից, բոլոր շահառուները, այդ թվում՝ հանցագործները: Հիմա հարց է ծագում՝ մենք ազգովի պետք է սուբսիդավորենք այդ հանցագործներին»:**

ՀՀ Ֆինանսների նախարարության ներկայացուցիչը փաստաբանական ծառայություններն այլ ծառայությունների և ապրանքների հետ համեմատելով ըստ էության ընդգծել է դրա ոչ առաջնային և երկրորդական նշանակության լինելը, իսկ օրենսդրական նախաձեռնությունը հիմնավորել է մեղադրյալներին սուբսիդավորելու ցանկության բացակայությամբ, վերջիններիս պիտակավորելով որպես հանցագործներ:

Այս դիրքորոշումը մտահոգիչ է հետևյալ տեսակետներից՝

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացուցիչը շրջանառության հարկը համարում է արտոնություն (սուբսիդավորում), այնինչ շրջանառության հարկը ԱԱՀ-ին և (կամ) շահութահարկին փոխարինող հարկման հատուկ համակարգի հարկ է (ՀՀ հարկային օրենսգրքի 8-րդ հոդված)։
2. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացուցիչը ոչ ճիշտ պատկերացում ունի մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին։
3. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացուցիչը ոչ ճիշտ պատկերացում ունի փաստաբանական գործունեության մասին։

Ինչպես հրշեջի համար դաշնամուրի և ջութակի տարբերությունը կայանում է միայն դաշնամուրի առավել երկար վառվելու մեջ, այնպես էլ Նախագիծը մշակող մարմնի կողմից փաստաբանության ոլորտը միայն հարկ հավաքելու օբյեկտ է դիտարկվում։

1948 թվականի դեկտեմբերի 10-ին Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի հռչակած Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը (1948թ.) նպատակ է հետապնդել մարդկանց իրավունքները և ազատությունները ճանաչել և պաշտպանել։ Հռչակագրի նախաբանում ներկայացվել են նաև այն բացասական կանխատեսումները, որոնք կարող են տեղի ունենալ մարդկանց իրավունքների և ազատությունների խախտման արդյունքում։

Հռչակագիրն ընդունվել է՝

- նկատի առնելով, որ մարդկության ընտանիքի բոլոր անդամներին հատուկ արժանապատվության և նրանց հավասար ու անկապտելի իրավունքների ճանաչումը հանդիսանում է ազատության, արդարության և համընդհանուր խաղաղության հիմքը, և

- նկատի առնելով, որ **մարդու իրավունքների ուրնահարումն ու արհամարհումը հանգեցրել են բարբարոսական, մարդկային խիղճը վրդովող գործողությունների.** և որ մարդկության վեհ նպատակն է հռչակված այնպիսի մի աշխարհի ստեղծումը, որտեղ մարդիկ կունենան խոսքի ու համոզմունքների ազատություն և զերծ կլինեն վախից ու կարիքից, և

- նկատի առնելով, որ **անհրաժեշտ է, որպեսզի մարդու իրավունքները պաշտպանվեն օրենքի ուժով, նպատակ ունենալով ապահովել, որպեսզի մարդը հարկադրված չլինի դիմելու բռնության ու ճնշման դեմ ուղղված ապստամբության՝ որպես վերջին միջոցի, ...»:**

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը և միջազգային մյուս պայմանագրերը նույնպես մարդու իրավունքները և ազատությունները ճանաչում են բարձրագույն արժեք, իսկ անձին համարում

են անմեղ, քանի դեռ օրինական ուժի մեջ մտած դատավճռով չի հաստատվել նրա մեղավորությունը:

Մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 66-րդ հոդվածի համաձայն՝ *Հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:*

Հիմք ընդունելով վերոգրյալը, գտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության անունից հանդես եկող բարձրաստիճան պաշտոնատար անձը պարտավոր է հարգանքով վերաբերվել քաղաքացուն և քաղաքացու իրավունքներին, իր լիազորություններն իրականացնելիս հաշվի առնել հասարակության բոլոր խմբերի շահերը, իսկ օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալիս առաջնորդվել իրավական պետության հիմնարար սկզբունքներով:

Ամփոփելով վերոգրյալը

Խնդրում եմ՝

- Ձեր հանձնարարականը իրավասու մարմնին՝ Նախագծի 33-րդ և 36-րդ հոդվածներից «հաշվապահական, խորհրդատվական, իրավաբանական ծառայություններ մատուցողները» բառերը հանելու կապակցությամբ:

Հարգանքով՝

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
նախագահ՝ Արա Զոհրաբյան